# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

## ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 13-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 17.5-րդ կետի 27-րդ ենթակետի, Պալատի նախագահի 11.11.2013թ. թիվ 39-Լ որոշմամբ հաստատված և 28.07.2021. թիվ 133-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ շարադրված «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի կանոնակարգի» 6-րդ և 27-րդ կետերի պահանջներով,

հաշվի առնելով Պալատի երիտասարդական խորհրդի նախագահ Միքայել Դանիելյանի (արտոնագիր՝ թիվ 2866) դիմումն իր լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ,

նկատի ունենալով Պալատի երիտասարդական խորհրդի անդամ, փաստաբան Արև Հարությունյանի (արտոնագիր՝ թիվ 3244) համաձայնության առկայությունը նշանակվելու Պալատի երիտասարդական խորհրդի նախագահ,

***Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝***

1. Դադարեցնել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի նախագահ Միքայել Դանիելյանի (արտոնագիր՝ թիվ 2866) լիազորությունները,

2. Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի երիտասարդական խորհրդի նախագահ նշանակել փաստաբան **Արև Հարությունյանին** (արտոնագիր՝ թիվ 3244)՝ մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ժամկետով՝ դադարեցնելով նրա՝ խորհրդի անդամի լիազորությունները:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Սիմոն Բաբայան

**25 մարտ 2025թ.**
**թիվ 129-Ա**
**ք. Երևան**